

Կանանց
ներգրավումը
ֆերմերային գործում



1. Կանանց դերը ֆերմերային գործում

Ո՞վ է ֆերմերը

Գենդերի և գյուղատնտեսության մասին գրականությունը ներգրավված է տնային տնտեսության մեջ: Սոցիալական մոտեցումը կարևոր է հասկացության ստեղծման համար, թե ով է «ֆերմերը»: Ըստ Դոսի, կան մի քանի ճանապարհներ հասկանալու համար, թե ով է ֆերմերը. տնային տնտեսության ղեկավարը, այն հողի սեփականատերը, որը մշակում է կամ այն անհատը, ով իրավունք ունի ստանալու արտադրանքի վաճառքից ստացված եկամուտը:



Որպես տնային տնտեսության ղեկավար

Չնայած կա աճող մոտեցում, որ ֆերմերային գործն ընտանեկան բիզնես է, շատ հասարակություններում

ընտանի տնտեսության գլուխը, անկախ՝ կին, թե տղամարդ, դեռ սահմանվում է առաջնային ֆերմեր և ընդունվում է որպես գյուղատնտեսության համապատասխան ընդլայման տեղեկատվության միակ ստացողը: Չնայած սա դանդաղորեն փոխվում է, ըստ Համաշխարհային բանկի 2010թ. հաշվետվության, շատ հաստատություններ շարունակում են գործել այն համոզմունքի տակ, որ «կանայք ֆերմերներ չեն»: Որպես արդյունք կանայք ստանում են ոչ լիարժեք ծառայություններ իրենց իսկ իրավունքներին համապատասխան, հաճախ համարվում են օգնականներ կամ էլ հանդիսանում են տնային տնտեսության իրականացնողներ: Այն կարծիքը, որ իրենց դերը գյուղատնտեսությունում կապված է տնային տնտեսության պատասխանավորություններին, անտեսում է արտադրանքի և բերքահավաքի ժամանակ կանանց ներդրած ուժերի դերը: Այս մոտեցումներից որոշները վերահաստատվում են հենց կանանց կողմից: Որոշ կանայք փաստում են, որ իրենց գյուղատնտեսական գործունեությունը կայանում է միայն «իրենց ամուսիններին օգնելու մեջ»: Որոշ հատվածներում կանայք բնութագրում են օրինակ այգեգործությունը որպես հավելյալ գործողություն: Սահմանելով գենդերային հարաբերությունները տղամարդկանց և կանանց միջև նույն ֆերմերային տնային տնտեսության վերաբերյալ, հանգեցնում է այն ենթադրությունների բախման, որ տեղեկությունը հասանելի է կանանց և տղամարդկանց միջև, սակայն հիմնական թիրախավորում իրականացվում է տղամարդկանց ուղղությամբ, նույնիսկ եթե այն վերաբերում է կանանց պատասխանավորության տակ գտնվող գործին:

Ֆերմերային շահույթ ստացող

«Կանանց մշակաբույսեր» և «տղամարդկանց մշակաբույսեր» տերմինների օգտագործումը շեշտում է աշխատանքի կեղծ բաժանումը, որն իրականացնում է սննդային մշակաբույսերի բաշխումը կանանց և տղամարդկանց միջև: Գանդայում իրականացրած Դոսի (2002) ուսումնասիրությունները կանանց և տղամարդկանց միջև եզրակացրեց, որ թեկուզ կան մշակութային հասկացություններ տղամարդկանց և կանանց մշակաբույսերի միջև, այդ մշակաբույսերը հստակեցված չեն: Օգտագործելով տնային տնտեսության ուսումնասիրությունների տվյալները նա գտավ, որ չկա որևէ մշակաբույս, որն աճում է բացառապես կամ

մեծամասնությամբ կանանց կողմից, և միայն որոշներն են բացառապես կամ մեծապես աճեցվում տղամարդկանց կողմից, չնայած կան որոշ էկոլոգիական շրջաններում գենդերային մշակման ուղիներ և տղամարդիկ ու կանայք կարող են տարբեր ձևով ազդեցության ենթարկված լինել իրականացված

գյուղատնտեսական

քաղաքականությանը:

Նա եզրակացրեց, որ «շատ մշակաբույսեր չեն կարող



հաստատվել աճեցված հիմնականում կա՛մ տղամարդկանց, կա՛մ կանանց կողմից»: Ավելին, որտեղ առկա է կոնկրետ մշակաբույսերի և գործողությունների կապ գենդերի հետ, ապա այդ կապը ժամանակավոր է: Օրինակ, Կամբոջիայում՝ Օգավան բնութագրում է, որ չնայած առկա է կոշտ բաժանում կանանց և տղամարդկանց խնդիրների միջև, կոնֆլիկտային տարիները և տղամարդկանց աշխատուժի պակասը ստիպել է կանանց ավելի շատ գործողություններ իրականացնել, որոնք առաջ համարվում էին տղամարդկանց գործ առանց որևէ խարանի կամ ամոթի: Գամբիայում և Բուրկինա Ֆասոյում, չնայած բրնձի մշակման հանդեպ ընդունված պատասխանատվությունների, որոնք իրականացնում են կանանց կողմից, այնքան բարելավվեց, որ հողերի և գյուղատնտեսական կուլտուրաների իրավունքը տղամարդկանց ընձեռվեց:



Ո՞րն է կանանց դերը գյուղատնտեսությունում և գյուղական համայնքներում

Ցավոք, ընդլայնման¹ ծառայությունների կողմից առաքված տեխնոլոգիական փաթեթներն երբեմն վերահաստատում են աշխատանքի կարծրատիպային բաժանումները:

Կանայք կատարում են կարևոր ներդրում գյուղատնտեսական և գյուղական տնտեսություններում աշխարհի բոլոր


տարածքներում: Այնուամենայնիվ, կոնկրետ ներդրումը թե՛ չափերով, թե՛ իր բնույթով հաճախ դժվար է գնահատել և ցույց է տալիս տարբերության բարձր մակարդակ տարածաշրջաններում և երկրներում:

Կանայք գյուղատնտեսական աշխատուժում

Երկու տեսակի տեղեկություն կարող է չափել գյուղատնտեսական աշխատուժում կանանց ներդրման դերը՝ գյուղատնտեսությունում տնտեսապես ակտիվ բնակչության շրջանում կանանց մասնաբաժնի վիճակագրությունը և ժամանակին օգտագործված ուսումնասիրությունները, որոնք փաստում են տարբեր գործողությունների վրա ծախսած ժամանակը: Կանանց դերը տնտեսական զարգման գործում՝ հիմնվելով ազգագրական տեղեկատվության վրա, փաստում է, որ կարևորագույն ուշադրություն է դարձվում թե՛ ակադեմիական, թե՛ զարգացած հասարակությունների կողմից կանանց արդյունավետ դերին գյուղատնտեսությունում: Այդ կետից առաջ, մեծ գրականություն ի հայտ եկավ, որը սկզբնապես ճանաչում էր զարգացման ծրագրերի անհաջողությունը՝ ընդգրկելու կանանց որպես արտադրողներ, և վերջապես, թե այդ ընթացքում ինչպիսի մոտեցումներ էին իրականում աշխատում: Վաղ «տրեյնինգների և այցելությունների» ընդլայնման ծրագիրը՝ հիմնված ֆերմերներին նոր տեխնոլոգիաների փոխանցման արդյունավետության մոդելի վրա, արդյունավետորեն չէր հասնում կին ֆերմերներին, փոքրամասշտաբ արտադրողներին կամ որոշ

¹ Գյուղական ընդլայնումն այսօր արդեն ընդունված գործողություն է դարձել աշխարհի շատ երկրներում և այն կազմում է ծրագրերի հիմնական մասը, որոնք ստեղծված են գյուղական շրջաններում փոփոխություն իրականացնելու համար: Ընդլայնման ծառայությունները գյուղական համայնքների վարչական հատվածի համապատասխանաբար ընդունված առանձնահատկություններից են: Ֆերմերների հետ համագործակցության միջոցով, այս ծառայություններն ունեն պատասխանատվություն, փոփոխության համար իրականացվող ծրագրերի ղեկավարման հարցում:

Էթնիկական ներկայացուցչություն ունեցող ֆերմերներին: Այս ծրագրի շրջանակներում կանայք մեծապես դիտվում էին որպես շահութաբերներ բարեկեցության տեսանկյունից, սակայն ոչ որպես իրենց սեփական գյուղատնտեսական արտադրության գլխավոր դերակատաներ: Ինստիտուցիոնալ մակարդակով այս շրջանը փաստում է գենդերային խնդիրների քաղաքականության ավելացած ուշադրության մասին, սակայն գենդերային անհավասարությունները մնացին որպես մեծագույն անհամապատասխանատվություն:



Այս վաղ շրջանում խորհրդատվական ծառայությունների գենդերային անալիզները մարտահրավեր ներկայացրին ոչ միայն ծառայության, այլև հենց կառուցվածքի բնույթին: Օրինակ, Արևմտյան Քենիայի 1970-ական թվականների 212 տնային տնտեսությունների ուսումնասիրությունների համաձայն պարզվեց, որ կին ֆերմերների մոտավորապես կեսը (49%) այցելության չեն արժանացել աշխատակիցների կողմից: Հրահանգումներն առաջարկված էին համայնքային խմբակային հանդիպումների, տեղական տրեյնինգ կուրսերի շրջանակներում: Կանանց տոկոսային հարաբերակցությունը, ովքեր չեն մասնակցել ցուցադրական սեմինարներին կազմում էր 62% և կանանց 95% չի մասնակցել տեղական կուրսերին: Որպես եզրակացություն եղավ այն, որ «լայնամասշտաբ անհավասարություններ գյուղատնտեսական ծառայությունների մատակարարման մեջ գոյություն ունեն կանանց կողմից և տղամարդկանց

կողմից ղեկավարվող ֆերմաների միջև»: Հետագա ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հաճախ հենց գյուղապետներն ու դաշտային ընդլայնման աշխատակիցներն էին մնականում տղամարդիկ են, ովքեր կատարում են ընտրություն, որպես հետևանք տղամարդկանց նախընտրությունների, չնայած՝ մի շարք կանանց կողմից տրամադրած գյուղատնտեսական ծառայությունների:

2. Իրավիճակը տարածաշրջաններում

Ամբողջ աշխարհում կանայք կազմում են գյուղատնտեսական աշխատանքի մեծ մասը. Ենթասահարական Աֆրիկայում 2015թ. նրանք ներկայացրեցին գյուղատնտեսական աշխատուժի 40%: Որոշ զարգացող երկներում նրանց ավանդը գերազանցում է 50%: Վերացնելով գենդերային բացը, հնարավոր է մեծացնել կանանց կողմից հսկվող բերքը 20-30%: Սա թույլ կտա բարձրացնել ընդհանուր գյուղատնտեսական արտադրանքը զարգացող երկներում 2.5-4%: Սակայն կանայք տիրապետում են քիչ ազդակների (հող, ընտանի կենդանիներ, մարդկային կապիտալ) և ունեն ավելի քիչ մուտք ներդրումների (սերմեր, սնուցիչներ, աշխատանք, ֆինանս) և ծառայությունների (տրեյնինգներ, ապահովագրություն), քան տղամարդիկ: Հետագայում բարդացնելու համար իրավիճակը, ռեսուրսների հավասար մուտքը չի երաշխավորում հավասար վերադարձ կին ֆերմերների համար: Կանայք կարիք ունեն հատուկ գյուղատնտեսական տրեյնինգների, երեխաների խնամակալության և հարմարեցված օժանդակություն՝ դյուրացնելու համար նրանց կրկնակի աշխատանքային ծավալը որպես ֆերմերներ և խնամակալներ: Ճիշտ ռեսուրսները կարող են օգնել գյուղական կանանց ավելացնելու տնտեսական հնարավորությունները, մեծացնելու արտադրողականությունը և բարելավելու սննդի անվտանգությունը, կրթությունը և առողջությունը:



Համաշխարհային բանկը դարձրել է գենդերային հավասարությունը գյուղատնտեսական և սննդային ոլորտում որպես թիրախային կետ: Ամեն ծրագիր ներառում է գործողություններ

հիմնված գենդերային անալիզի վրա, որն ուղղված է ստանալու դրական գենդերային արդյունք: Բանկը աշխատում է.

- **Մեծացնել կանանց հողերի և գյուղական ֆինանսների մուտքը:** Կանանց հողերի, ֆինանսների և արտադրանքային ներդրումների ավելի բաց մուտքի ապահովումը վճռական է՝ փակելու համար արտադրողականության բացը, որտեղ գյուղական շրջանների ներկայությունը կարող է խաղալ կարևոր դեր կին ֆերմերների օժանդակության համար: Բանկը նաև ապահովում է կանանց՝ հողային ծրագրերից ստացված օգուտը:
- **Կապել կանանց գյուղատնտեսական արժեքային շղթաներին:** Երբ կանայք կապված են գյուղատնտեսական արժեքային համակարգին՝ արտադրության ամբողջ ընթացքից մինչև մշակում և մարկետինգ, նրանք օգնում են ստեղծել ազգային ֆերման ավելի արդյունավետ և առևտրային առումով ավելի կենսունակ: Ներառյալ արժեքային շղթաները նաև առաջարկում են աշխատանքային հնարավորություններ կանանց և տղամարդկանց համար ֆերմայից դուրս:
- **Բարելավել գյուղական կանանց մուտքը տրեյնինգներին և տեղեկության ստացմանը:** Ֆերմայի տեխնիկաների գիտելիքն արդյունավետ է, այնուամենայնիվ կին ֆերմերներն ունեն գյուղատնտեսական ընդլայնման և տրեյնինգային ծառայությունների անբավարար մուտք: Նաև կարևոր է, որ տրեյնինգները և գյուղատնտեսական տեխնոլոգիաները լինեն ընդունելի և



համապատասխանեն գյուղական կանանց կարիքներին և խոչընդոտներին: Արտադրել գիտելիք, տեղեկություն և գործիք, որը կնպաստի գենդերային հավասարությանը գյուղատնտեսությունում և սննդային ոլորտի ծրագրերին:

Բանկն արտադրում է ռեսուրսներ, որոնք օգնում են պրակտիկաներին ինտեգրվելու զգայուն գենդերային գործողություններին իրենց ծրագրերում:

Վիետնամում 2013թ., Գյուղական ֆինանսական ծրագիրը մեծացրել է ֆինանսական ծառայությունների գյուղական ձեռնատիրության կանանց մուտքը՝ պահանջելով, որ կին վարկառուները իրականացնեն տնային տնտեսության և միկրոձեռնակարատիրության

ամենաքիչը 40% կարճաժամկետ պարտքեր: Վարկառուներից 120,000, ովքեր ներդրել են ծրագրերում 430\$ մլն, 42% կանայք են:

2014թ. **Ռուանդայում** հողատարածքային ծրագիրն օգնել է շահութաբեր 85% իր կին ֆերմերներին դառնալ հաճախորդ ֆորմալ ֆինանսական հաստատություններում: 70% ապահովված գործիքները բարելավում են իրենց ֆերմերային մեթոդները:

2015թ. Մայիսում, Բանկն օգնել է զարգացնել այգեգործական արժեքային շղթաներ, որտեղ կանայք կարևոր խաղացողներն են, մասնավորապես գյուղարտադրության փուլում: Ծրագրի շահառուների 40%-ը կանայք են, ովքեր ունեն պահանջված նոր հմտություններ և ծրագրի ընթացքում աշխատանք:

Կամերունում բանկն օգնել է ֆինանսավորելու կին ֆերմերներին և կապել նրանց շուկայի հետ: Ծրագիրը նաև խորացնում է տնային տնտեսության սնուցումը՝ զանազանելով կանանց կողմից արտադրված մշակաբույսերը նրանց ընտանիքների համար: 2016թ. տվյալներով 79,000 տնային տնտեսություններ օգուտ են քաղել, որոնցից 60% գլխավորվել է կանանց կողմից:

2011թ. սկսած, **Հնդկական** ազգային գյուղական կենսամիջոցների ծրագիրը մոբիլիզացրել է գյուղական կանանց 300,000 ինքնուրույն խմբերի (SHG) գյուղերում, ենթանահանգներում և

նահանգներում: SHG-ն

նպաստում է գյուղական աղքատների

խնայողություններին,

մասնավորապես կանանց,

որպեսզի նրանք կարողանան ստեղծել իրենց ֆինանսական կապիտալը և դառնան բանկային սպառողներ,

միկրոֆինանսական

հաստատություններ,

երաշխիքային

կազմակերպություններ և այլ ֆինանսական

հաստատություններ, որոնք

ապահովում են կրեդիտներ և այլ ֆինանսական ծառայություններ: Անդամ տնային տնտեսություններն ունեն կուտակային խնայված գումար ավելի քան 70\$ մլն:

Քենյայում 2015թ. կանանց և տղամարդկանց համար իրականացվել են տրեյնինգներ նոր գյուղատնտեսական տեխնոլոգիաների և ագրոբիզնեսի զարգացման մասին: Կանանց մեծամասնությունը հաղորդել է 35%-ի շահույթի աճ իրենց գյուղատնտեսական գործողությունների հաշվին:

Ենթասահարյան Աֆրիկայում, գյուղատնտեսական արտադրության 80% իրականացվում է մանր ֆերմերի կողմից: Իսկ գյուղատնտեսական աշխատուժի կանանց մասնաբաժինը հանդիսանում է աշխարհում ամենաբարձրը: Մակայն գյուղական կանանց կյանքը հեշտ չէ: Կանայք օժտված չեն նույն իրավունքներով ինչ որ տղամարդիկ և հաճախ իրակացնում են տնային պարտականություններ ու գյուղատնտեսական աշխատանք՝ ցանք, հողագործություն, բերքահավաք, ինչպես նաև սննդի պատրաստում իրենց ընտանիքների համար և վառելափայտի ու ջրի հավաքում:



Կանանց համար կարող է շատ ավելի դժվար լինել ստանալ նույն արդյունքն իրենց ֆերմաներում, ինչպես տղամարդիկ, քանի որ նրանք հաճախ ունեն ավելի սահմանափակ մուտք հողերին, գյուղատնտեսական ընդլայնման ծրագրերին և տեխնոլոգիաներին: Համաշխարհային փորձը ցույց է տվել, որ երբ կանայք ստանում են համապատասխան խրախուսանք, նրանք հակված են ավելի մեծ ներդրումներ իրականացնելու իրենց տնային տնտեսություններում: Ավելին, Համաշխարհային պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը հաշվարկել է, որ եթե կանանց տրված լինեին արդյունավետ ռեսուրսների նույն մուտքը, ինչ որ տղամարդկանց, նրանք կարող էին ավելացնել իրենց բերքը 20-30%-ով, որն իր հերթին կնվազեցներ սոված մարդկանց թվաքանակն ամբողջ աշխարհում 12-17%-ով: Հիմնական ծրագրերը, որոնք իրականացվում են կանանց ներգրավվածության ծավալի ավելացման համար կատարում են հետևյալ գործողությունները՝

- Ներգրավել կանանց արտադրանքի վաճառքի շուկայում՝ տալով նրանց ավելի լայն ֆինանսական անկախություն և շուկայական գների ազատություն, որպեսզի նրանք համապատասխանաբար իրականացնեն իրենց ֆերմերային բիզնեսը:
- Կարգավորել կանանց խնայողությունները և վարկային խմբերը, որպեսզի կանայք կարողանան կառուցել լավ ֆինանսական գրառումներ և դիմեն վարկ ստանալու համար՝ բարելավելու իրենց ֆերմերային բիզնեսը:
- Իրականացնել տրեյնինգներ, որոնք կլնին կանանց համար հասանելի:
- Աջակցել կանանց գյուղատնտեսական ծրագրերի համար, որոնք կարող են դեկավարվել տնից, ինչպիսին՝ մեղվապահությունն է:

Կին Ֆերմերները կլիմայական փոփոխությունների ֆոնին

Քանի որ կլիմայական փոփոխություններն իրականություն են դառնում աշխարհի տարբեր ծայրերում, ֆերմերները կարիք ունեն աղապտացնելու իրենց ֆերմերային տեխնիկաները՝ գոյատևելու համար: Կին ֆերմերները խոչընդոտների առաջ են կանգնում՝ կլիմայական փոփոխություններին ընդառաջ: Նրանց հողի, կրեդիտների, գյուղատնտեսական տրեյնինգների և այլ տեղեկությունների նկատմամբ իրավունքներն ու մուտքը, հաճախ չի ընդգծում կանանց

գործունեությունը ֆերմերային գործում:

Տղամարդ և կին հողատերերի խոչընդոտը վերացնելով օրինական և քաղաքական շրջանակներում՝ ազգային մակարդակով և ազդելով նորմերի և



սովորույթների վրա տեղական մակարդակով, կարող է ապահովել մեծ օգուտներ: Նման օգուտները կարող են նշանակել բարձրացված և կայուն բերք, այլ բառերով ավելի լավ սննդի մատակարարում՝ հասարակությունների և ապագա սերունդների համար:

Կանանց ներգրավումը գյուղատնտեսական և հարակից գիտական ուսման մեջ

Աֆրիկյան երկների շարքում Գանան ամենացածր ցուցանիշն է ցույց տալիս գյուղատնտեսական ոլորտում կանանց ուսման ապահովման հարցում: Ըստ 14 աֆրիկական երկների ուսումնասիրությունների, Գանայում կանայք կազմել են գյուղատնտեսական ոլորտում ուսանողների 20%: Սա երրորդ ամենացածր մակարդակն է կանանց ներգրավման գործում, ավելին այս կանանց մեծագույն մասը ուսանում էր բակալավրի համար:



Չնայած Ղասախստանում ավարտած ուսանողների մոտ 40-45% գյուղատնտեսական ոլորտից կանայք են, միայն շատ փոքր քանակն է շարունակում այս ուղությամբ սովորել: 2008թ. միայն յոթ կանայք ավարտեցին Ph.D. մակարդակները գյուղատնտեսական ոլորտում, համեմատած 97 տղամարդկանց, իսկ այն մարդկանց ամբողջական քանակը, ովքեր ձգտում են Ph.D. նվազում է: Քոլեջներում

և համալսարաններում գյուղատնտեսություն ուսումնասիրողների մասը ընդհանուր առմամբ կազմում է մեկ տոկոս:

Գյուղատնտեսական ոլորտում բարձրագույն ուսման մեջ կանանց մասնակցության մասին վերջերս իրականացված համաշխարհային ուսումնասիրության համաձայն Մենեգալը հայտնվեց տասներկու երկներից ամենացածր վարկանիշի վրա, որն ունի ամենացածր տոկոսային մասնակցությունը կանանց ընդհանուր ուսանողների ներգրավվածության մեջ: Կանանց մասնաբաժինը ներգրավվածության բակալավր և մագիստրոսական մակարդակով կազմել է 8%:

Տաջիկստանի երիտասարդ կանայք կազմում են բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող ուսանողների 35%, չնայած նրան, որ տղամարդկանց մեծ մասը դուրս է գալիս երկրներից աշխատանքի փնտրտուքի համար, ինչը թողնում է երկիրը լի


կանանցով: Երկիտասարդ տղամադիկ կազմում են գյուղատնտեսությունն ուսումնասիրող ուսանողների 7%: Կանանց պակասը գյուղատնտեսությունում և այլ տեխնիկանան դաշտերում արտացոլվում է ազգային տնտեսության վրա: Այս գենդերային մասնագիտության ընտրություններն արտացոլվում են մարդկային կապիտալի պակասով՝ Տաջիկստանի կանոնագրային ոլորտներում, ինչպիսին գյուղատնտեսությունն է և ագրոբիզնեսը:

ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության Գենդերը և գյուղատնտեսական աղբյուրը նպաստում է կլիմայական գյուղատնտեսության ծրագրերի իրականացմանը (CSA-Climate-smart agriculture): Այն շեշտում է, որ տղամադիկ և կանայք պետք է ունենան հավասար մուտք տրեյնինգ ծրագրերին: Հատկանշական է այն փաստը, որ ուշադրության կենտրոնում է տվյալ երկրի սովորույթներն ու ավանդույթները և կանանց ու տղամադիկանց հողի, ընդանի կենդանիների, կրեդիտների և շահույթի մուտքի տարբերությունները:

Կանայք ոչ միայն խոցելի են կլիմայան փոփոխություններին, բայց նրանց նաև փոփոխությունների արդյունավետ խաղացողներ են: Քայլ առ քայլ երկրները կարող են աշխատել սա իրականացնելու համար՝ վերանայելով ազգային իրավունքները և քաղաքականությունը՝ տալով ռեսուրսները և հնարավորությունները՝ իրենց իրականացման համար և աստիճանաբար փոխելով ընտանքիների և հասարակական խմբերի միջև վարքը:

Կանանց հավաքագրում

Տարիների ընթացքում քիչ ուսումնասիրություններ են իրականացվել կանանց հավաքագրման ազդեցության մասին, որպես ընդլայնման գործակալներ կին ֆերմերների մասնկացությամբ՝ ընդլայնման գործողությունների համար: ՖԱՕ-ի 1993թ. Լատինական Ամրիկայում, Աֆրիկայում և Ասիայում 24 ընդլայնման ծրագրերի իրականացված





ուսումնասիրության
արդյունքում եզրակացրել են,
որ ֆերմերային սեկտորում
կանանց ներկայությունը
խտացնելու համար, պետք է
իրականացվի ընդլայնման
գործողություններին կանանց
մասնակցության
ապահովմամբ: Զարգացման և
համագործակցության
շվեցարական
գործակալությունը (The Swiss

Agency for Development and Cooperation) փաստում է, որ կին-կին մասնակցությամբ ընդլայնումը հանգեցնում է տեղեկատվության ավելի լավ փոխանակման, քան տղամադ-կին: Տարբեր տեղեկություններ մի շարք Աֆրիկական երկրներից մատնանշում են կանանց ընդլայնման գործակալների ցածր նիշի առկայությունը և քաղաքականության իրականացման մակարդակում, ի տարբերություն տղամարդկանց: Օրինակ, Մալիում ընդլայնման գործակալների շրջանում մենեջմենթի մակարդակում կա միայն մեկ կին գործակալ: Համաշխարհային բանկի ուսումնասիրությունների համաձայն, Գանայում առկա 70 աշխատակիցներից միայն տասն են կին: Նույն ուսումնասիրություններում Կարնատակայում՝ Հնդկաստան, 41 գյուղատնտեսական աշխատակիցներից ոչ մեկը կին չէր, 41 երիտասարդ ինժեներներից մեկն էր կին, իսկ անասնաբուժական բաժնում քառասունից չորսը կին էին: Նման ցածր ցունցանիշներ կան Եթովպիայի գենդերային ներկայացուցչությունում: Ուզանդայում իրավիճակն ավելի լավ է. կանանց ներկայացվածությունն ուսման, գյուղատնտեսական ընդլայնման մասնագիտության դիպլոմի և սերտիֆիկատի ուսումնական մակարդակով: Չնայած անհամապատասխանությունները շարունակվում են Նիգերիայում. ջանքերը բարելավելու կին ֆերմերներին տրամադրվող ընդլայնման ծառայությունները հանգեցնում են ընդլայնման կին աշխատակիցների ընդունմանը:

Մինչ WIA-ը, կանայք ավելի շատ ներգարվված էին տնային տնտեսությունում և այլ տնային գործողություններում: WIA ծրագիրը լայնացրեց գյուղատնտեսական ընդլայնման ծառայությունները կանանց համար, հիմնականում վերապատրաստելով առկա տնային տնտեսության աշխատակիցներին գյուղատնտեսությունում և ընդլայնման մեթոդիկայում:

Չնայած նրան, որ կանայք հանդիսանում են տղամարդկանց ֆերմաներում աշխատակիցներ, նրանց պաշտոնական տիտղոսը որպես ֆերմերներ հաստատված չէ, փոխարենն ընտանիքի պարտականությունների իրականացնող: Հնդկաստանում այս ամենը հաստատեցին տարբեր զեկույցներ: Հետագայում աշխատելով Շրամ Շակտի² կանանց խմբում այս փաստը

² Հնդկաստանի կին աշխատակիցների մասին չհաստատված սեկտորում առաջին կառավարական զեկույցը:

հաստատվեց: Ֆերմային սեկտորն անգամ 1989թ. աշխատանքի վերցրեց կանանց ամենամեծ մասնաբաժինը թե՛ որպես մշակողներ, թե՛ որպես ամենօրյա աշխատողներ: Սակայն կանայք մնացին «աշխատող» պաշտոնական տերմինից դուրս մարդահամարային զեկույցների մեջ:

Այսօր վերջին մարդահամարների տվյալներով հաշվում են միայն 32.8% կին, ովքեր պաշտոնապես համարվում են առաջնային աշխատողներ գյուղատնտեսական սեկտորում, համեմատած 81.1% տղամարդկանց: Սակայն անհերքելի փաստ է մնում այն, որ Հնդկաստանի գյուղատնտեսական ինդուստրիան, որն ունի 80-100 միլիոն կին, չի կարող գոյատևել առանց նրանց աշխատուժի: Սկսած հողի պատրաստումից, սերմերի ընտրությունից, տնկիների պատրաստումից և փոխանակումից, պարարտանյութերի (գորմաղբի), պետիցիդների կիրառումից մինչև բերքահավաք, կանայք աշխատում են շատ և երկար քան տղամարդ ֆերմերները:

Պահպանելով այս սեկտորի օժանդակ ճյուղերը, ինչպիսին են անասնապահությունը, ձկնաբուծությունը և բանջարեղենային մշակումը, կախված է բացառապես կանանցից: Սակայն կանանց դերի նվազեցումը և անտեսումը կարող է հանգեցնել նման իրավիճակի: Բանն այն է, որ հիմնական պատճառներից մեկը հանդիսանում է այն, որ կանայք շատ հաճախ չեն դասակարգվում որպես առաջնային վաստակողներ և հողի նկատմամբ սեփականատերեր: Այսպիսով վարկերի ստացումը, մշակության ուղիների որոշման մասնակցությունը, նահանգային պաշտոնյաների հետ առնչությունները, բանկային մենեջերների և քաղաքական ներկայացուցիչների հետ հանդիպումները, վարկերն ու սուբսիդիաները մնում են դեռևս տղամարդկանց պարտականությունների շրջանակներում:

Հայաստան

Զարգացող երկրներում կանայք միջին մակարդակով կազմում են գյուղական աշխատուժի 43% և աշխարհի 600 միլիոն աղքատ ընտանեկան տնտեսության հաստատվածից հաշվվում է 2/3-ը (FAOSTAT): Իսկ Հայաստանում կանանց (54.7%) շրջանում աղքատության մակարդակն ավելի բարձր է քան տղամարդկանց (45.3%) շրջանում: Ըստ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից ներկայացված «Գենդերը, գյուղատնտեսությունը և գյուղական շրջանների զարգացումը Հայաստանում» զեկույցի, սա հանդիսանում է կանանց սահմանափակ տնտեսական հնարավորությունների արդյունք, համեմատած տղամարդկանց: Նշվում է, որ Հայաստանի գյուղական բնակավայրերում առկա են կանանց ցածր կարգավիճակ և պահպանվող գենդերային կարծրատիպեր: Կանայք գերներկայացված են ոչ ֆորմալ զբաղվածության ոլորտում, ընտանեկան ֆերմաներում չվճարվող աշխատանքներում և տնային գործերում: Հայաստանում զբաղվածություն ունեցողների մոտավորապես 34.8% ներգրավված է գյուղատնտեսության մեջ, որոնցից մոտ 56% կանայք են: Ըստ 2014թ. տվյալների՝ կանանց միջին վարձատրությունը կազմել է

տղամարդկանց վարձատրության 65.9%: Չնայած նրան, որ տղամադիկ և կանայք ոչ ֆորմալ հատվածում վաստակել են ավելի քիչ, սակայն կանանց միջին վարձատրությունը կազմել է տղամարդկանց վարձատրության 47%: Առկա են նաև գյուղատնտեսության ոլորտում չվարվող աշխատանքներ իրականացնող կանանց բարձր մակարդակ:

Չնայած նրան, որ խոսքը գնում է միայն կին ֆերմերների մասին, անհնար է չանդրադառնալ այն հարցին, որ գենդերային անհավասարության հետ կապված խնդիրներն ստեղծում են անհարավարություններ վերջինիս զարգացման համար այս ոլորտում: Հայաստանում գենդերային անհավասարությանը նպաստող գլխավոր գործոններից մեկը տղամարդկանց և կանանց շրջանում տնտեսական ձեռներեցության ասպարեզում



շարունակվող անհավասարությունն է: Գյուղական բնակավայրերի կանայք սովորաբար օգտվում են միկրո վարկերից կամ վարկային ծրագրերից միայն այն դեպքում, երբ դրամական միջոցների աղբյուրը դոնոր կազմակերպություններն են, որոնք այս միջոցները տրամադրում են կանանց ներգրավման որոշակի աստիճանի ապահովման պայմանով (քվոտաներ) և այս երևույթի տարածվածությունը վերջին տասնամյակում աճել է:


Հասարակական կարծրատիպերի առկայության պայմաններում բավականին բարդ է ստեղծել ազատ հարթակ ժամանակակից զարգացման համար: Կանայք սովորաբար ընկալվում են երեխաներին խնամելու և կենցաղային աշխատանքներ իրականացնողներ, անկախ նրանից՝ աշխատում են տնից դուրս, թե ոչ, իսկ

տղամարդիկ սովորաբար դիտվում են որպես իրենց ընտանիքի տնտեսական բարեկեցության ու գոյատևման համար պատասխանատու՝ որպես հիմնական կերակրողը և ընտանիքի գլխավորը: Սա ուղղակիորեն կապված է կարծրատիպային գենդերային դերերի հետ և անմիջական ազդեցություն ունի ռեսուրսների ու տնտեսական հնարավորությունների հասանելիության և չվարձատրվող, տնային գործերում և վերարտադրողական գործառույթի կատարման հարցերում կանանց հսկայական ծանրաբեռնվածության վրա: Սա կարող է հանգեցնել ժամանակի բացակայության, կանանց՝ եկամտաբեր գործունեության մեջ ներգրավելու կարողությունների սահմանափակման և կանանց տնտեսական կախվածության:

2011թ. կատարված հարցումների արդյունքում մասնակիցների 85%-ը համաձայնել է այն պնդման հետ, որ որպես կանոն, տղամարդը պետք է լինի կերակրողը (միայն 14%-ն է

կարծում, որ այդ դերը պետք է հավասարապես բաշխվի): Լայնորեն տարածված է այն ակնկալիքը, թե կանանց առաջնային դերը կենցաղային դաշտում է, ամրապնդում է այն ընկալումը, որ կանայք չունեն քաղաքական կամ գործարար առաջնորդի ունակություններ և դա հաճախ կանանց ետ է պահում առկա հնարավորություններին ձգտելուց: Համարվում է, որ բիզնես սկսելու կամ տեղական իշխանություններում առաջադրվելու համար կանայք բավականաչափ սոցիալական կապիտալ կուտակած են լինում միայն այն ժամանակ, երբ նրանք օրինակ, 40-50-ն անց տարիքում են (այսինքն՝ երեխաներին մեծացնելուց հետո): Հարցազրույցների և ֆոկլուս խմբերի քննարկումների մի շարք մասնակիցներ նշել են, որ կանայք հաճախ ունենում են նորարական և լավ գաղափարներ, սակայն հաշվի առնելով նրանց դերն ու կարգավիճակը, տղամարդիկ են դրանք գործի դնում՝ հաճախ դրանք վերագրելով իրենց:

Վերոհիշյալ կարծրատիպերը և աշխատանքների ու պարտականությունների խիստ բաշխումն ըստ սեռի՝ անմիջական ազդեցություն ունեն գյուղաբնակ կանանց կարգավիճակի վրա: Հայաստանի հանրապետությունում կանանց կարգավիճակի գնահատման նպատակով 2010թ. ՀԺԱՀ-ի շրջանակներում տեղեկություններ են հավաքագրվել կանանց որոշում կայացնելու ինքնուրույնությունը գնահատելու համար: Այս նպատակով ՀԺԱՀ-ը գնահատել է ներկայումս ամուսնացած կանանց մասնակցությունը երեք տարբեր տեսակի որոշումների կայացմանը, որոնք վերաբերում են նրանց առողջությանը, խոշոր կենցաղային գնումների կատարմանը: 2010թ. կատարված Ժողովրդագրության և առողջության հարցրերի հետազոտության (ՀԺԱՀ) ընթացքում, հարցմանը մասնակցած հիմնական կրթություն ունեցող կանանց շուրջ 18% հաստատել է, որ իր և ամուսնու վաստակած գումարը տնօրինում է իր ամուսինը: Քաղաքաբնակ կանայք (34%) երեք անգամ ավելի հավանական է, որ որոշում կկայացնեն իրենց վաստակած գումարի առնչությամբ՝ ի տարբերություն գյուղաբնակ կանանց (11%):



* Հայտնի կին Ֆերմերներ

Քենյա

Քենյայում այս կանայք օգտագործում են ջուր մոտակա լճից՝ աշխատեցնելու համար ոռոգման համակարգն իրենց ֆերմայի ակրերի համար:



Կոնգոյի Ժողովրդավարական հանրապետություն

Բերատրիս Մինյաբահարան երեսունչորս հոգանոց պահպանության ծրագրի խմբին պատկանող կանանցից մեկն է: Անդամներից քսանհինգն այրի են, ովքեր ֆինանսապես խոցելի են, սակայն միասին նրանք գնել են ծառեր և սերմեր հասարակական այգու համար:



Ռուանդա

Թերեզ Ումուհիրեն հետևում է իր գնած այծին, որին ձեռք է բերել տնային տնտեսության տոնավաճառից, տղային իր մեջքին կապած: Տոնավաճառը մեկն է այն նախաձեռնություններից, որոնք ստեղծվել են Green Mountain Coffee Roasters-ի և CRS-ի միջոցով՝ օգնելու Ռուանդայում սուրճի բարգա լաճմանը:



Քենյա

Տրուպոգա Ալոն այրի է, ով պահում է իր վեց երեխաներին: Խնայողական և վարկային ծրագրերի միջոցով հիմա նա հաջողակ բիզնեսկին է, ով աշխատեցնում է իր ֆերման և ձկնորսական

նավակը՝ վաճառելու ապրանքները տեղական շուկաներին:

Վիետնամ

Նգույեն Տի Նգույեն հանդիսանում է Վիետնամում կին և տղամարդ ֆերմերների մի շարք խմբերի ղեկավար: Նա օգտագործում է նավակը որպես փոխադրամիջոց՝ պահպանելու համար տեղական մանգրով ծառերը:



Տանզանիա

Էդինա Մահուլիսյան աշխատում է դաշտում, որտեղ նա աճեցնում է սոխ, լոբեղեն, չինական կաղամբ և եգիպտացորեն իր երեխաների և հաշմանդամ ամուսնու համար:

Նիկարագուա

Տեղական կանանց խումբն աճեցնում և

բաժանում է բանջարեղեններ, որպես խնայողության խմբի գործողություն Էստելի Սան Անտոնիո գյուղում Նիկարագուայում: Խումբը վաճառում է բանջարեղեն տեղական մթերային խանութներին և ֆերմերային շուկաներին: Կելիա Գոնսալեսն օգնում է վաճառքի բանակցություններում:





Տանգանիա

Գենոֆեֆա Հաուլը և Քրիստինա Հաուլը մասամբ ֆերմեներ են: Վարկը նրանց տրամադրում է հիսուն տարեկան հավերով և անընդհատ տեխնիկական աջակցությամբ և տրեյնինգներով՝ օգնելու համար զբաղվել հավաքուծությամբ, հետագայում ամենօրյա ձվերի վաճառքի հաշվին:

Երուսաղեմ

Ինտիսար Մուհամեդ Հասան Ատալլահը և իր թոռնիկն ունեն երկուսուկես հա ֆերմա, որտեղ Ինտիսարը աճեցնում է խաղող և որոշ բանջարեղեններ:



Հնդկաստան

Մուդամա Դեվին կամավոր կերպով տրամադրել է իր հողերը՝ փորձարկելու համար բրնձի, ոսպի և գարու նոր տեսակները: Մնացած բոլորն իրենց գյուղից մտահոգված էին նոր սերմեր փորձելու ռիսկի գործոնից և ջրհեղեղային գոտու մեթոդիկայից, սակայն նա բաց չթողեց շանսը և արդյունքում իր նոր մշակաբույսերը կարող են դիմակայել ջրհեղեղային պայմաններին:



Աֆղանստան



Ըստ FAO-ի, կանայք պատասխանատու են սննդի արտադրության համարյա 60-80%-ի համար զարգացող երկրներում՝ թոչնաբուծության, մանր ընտանի կենդանիների և աճող սննդային մշակաբույսերի միջոցով: Զահրան Շաիդանի գյուղում սխտորի ֆերմեր է: Իսկ բարձր որակի սխտորն ավելացնում է կարտոֆիլի և ցորենի եկամուտները:

Տանգանիա

Անգելիկա Կոմբան /նստած/ իր ամուսնու և սոյայի մշակմամբ զբաղվող արդեն չորս սերնդի ներկայացուցիչ ֆերմենների հետ: Ընտանիքն այն է ինչն ուղղորդում է կնոջն աշխատելու ֆերմայում՝ ապահովելու իրենց սիրելիների համար եկամուտ:



Այսպիսով կարելի է եզրակացնել, որ կանանց և տղամարդկանց հավասար մուտքի ապահովում պետք է լինի գյուղատնտեսության մի շարք ոլորտներում՝ հող, կրթություն, գյուղատնտեսական տրեյնինգներ, սերմերի ապահովում, ջուր, գործիքներ և տեխնոլոգիա: Մա իր հերթին կհանգեցնի աշատատեղերի ապահովման և ավելացման, որի արդյունքում կստացվի ավելի շատ սնունդ բոլորի համար: Մոտ 1.1 բիլլոն կին ֆերմերներ չունեն հավասար մուտք վերոնշյալ ոլորտներին, որի հետևանքով նրանք չեն ցուցադրում իրենց ամբողջական ներուժը: Նման մուտքի հաստատման արդյունքում հնարավոր կլինի արտադրել 20-30% ավել սնունդ, որը կհանի 150 միլիոն մարդու քաղցից:

Հնարավոր է հստակորեն ասել, որ թեկուզ մենք գտնվում են 21-րդ դարում, սակայն դեռևս կանանց մոտ իրազեկման խնդրի պարագայում նրանք շարունակում են մնալ

Ֆերմայում ամուսինների օգնականներ և միայն բավականին քիչ տոկոսային հարաբերակցությունն է հանդիսանում հողի ամբողջական կամ իրավահասարակականատեր: Նման պարագայում հարց է ծագում իրազեկման միջոցների ընդլայնման մասին և ընհանրապես կրթության ոլորտում համակարգի բարելավման: Գյուղինստիտուտի շրջանավարտների հարաբերական ցածր տոկոսն է շարունակում այս ուղությամբ իր գործունեությունը՝ նշելով ոլորտի անշահութաբեր լինելը: Հարկավոր են միջոցներ ոլորտն ավելի հետաքրքրացնելու և նորարար տեխնոլոգիաների ապահովման համար:

Սրան հավելած կանանց նկատմամբ մշակութային «նախախնամությունները» պատնեշ են հանդիսանում կանանց ամբողջական ներգրավման համար: Անգամ առկա են երկրներ, որտեղ կանայք իրավունք չունեն լինել հողի սեփականատեր: Սա իհարկե չի վերաբերում զարգացած երկներին, որոնք հաստատել են իրենց տեղն ու դիրքը գյուղատնտեսական ոլորտում: Նման երկներում հասկացել են, որ կանայք հանդիսանում են հզոր տնտեսական ուժ և հարկավոր է օգտագործել նաև այդ հնարավորությունն ավել աշխատուժ ստանալու համար³:

³ Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):